HOLY TRINITY
ARMENIAN APOSTOLIC ORTHODOX CHURCH
Rev. Archpriest Zareh Zargarian, Parish Priest

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻ
Տ. Զարեհ Ա. Քհնյ. Զարգարեան, Հոգեւոր Հովիւ

## ՅՈՒԼԻՍ - JULY 17, 2016

## ԵՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

Ճաշու ընթերցուածներ

Ես. 5:1-10, Ա. Կորնթ. 6:18-7:5, Մատթ. 19:3-12

## THIRD SUNDAY OF TRANSFIGURATION

Synaxis readings

Isaiah 5:1-10; 1 Corinthians 6:18-7:11; Matthew 19:3-12



Սէրը համբերատար է, քաղցր է. սէրը չի նախանձիր, սէրը չի գոռոզանար, չի հպարտանար, անվայել վարմունք չունենար, իրենը չի փնտռեր, բարկութեան չի գրգռուիր, չարութիւն չի խորհիր, անիրաւութեան վրայ չի խնդար. հապա ճշմարտութեան խնդակից կ'ըլլայ: Ամէն բանի կը հանդուրժէ, ամէն բանի կը հաւատայ, ամէն բանի կը յուսայ, ամէն բանի կը համբերէ: *(1 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ 13)*

Love is patient and kind; love does not envy or boast; it is not arrogant or rude. It does not insist on its own way; it is not irritable or resentful; it does not rejoice at wrongdoing, but rejoices with the truth. Love bears all things, believes all things, hopes all things, endures all things. *(1 Corinthians 13)*

920 Progress Avenue, Toronto, ON M1G 3T1
Tel: (416)431-3001
www.TorontoArmenianChurch.com

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ - REQUIEM SERVICE

*Եւ առաւել յիշեա Տէր զհոգին.....*

| | |
|---|---|
| Մարալ Հէթթան Կորկիսեանի | Maral Hettan Gorgissian |
| Ալէք Ադամեանի | Alec Adamian |
| Աղաւնի Տարկունեանի | Aghavni Dargounian |
| Գրիգոր եւ Արտեմիս | Krikor & Ardemis |
| Եասավուլպաշի | Yasavoulbash |
| Գրիգոր Թոփակեանի | Krikor Topakian |
| Քրիս Թոմասեանի | Chris Tomassian |
| Հայկ Պոյաճեանի | Haig Boyadjian |

Յաւարտ Ս. Պատարագի սուրճի եւ անուշեղէնի հիւրասիրութիւն՝ ողբացեալներ ***Մարալ Հէթթան Կորկիսեանի***, ***Ալէք Ադամեանի*** եւ ***Աղաւնի Տարկունեանի*** յիշատակին՝ իրենց հարազատներու կողմէ:

Following the Divine Liturgy coffee & cookies will be served in memory of late **Maral Hettan Gorgissian, Alec Adamian and Aghavni Dargounian** by their loved ones.

Ս. Սեղանի ծաղիկներու եւ թերթիկի նուիրատու՝
***ՏԱՐԿՈՒՆԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ***
Խորանի Ծաղիկները պատրաստած է՝
***"Ann's Flowers" Ծաղկանոց***

The Altar Flowers and the Sunday Bulletin are sponsored by
***DARGOUNIAN FAMILY***

Altar Flowers Designed and provided by
***"ANN'S FLOWERS"***

### ALTAR FLOWERS



If you wish to sponsor the altar flowers in memory of your loved ones or in honour of a special person and memorable occasion, please contact the church office at 416-431-3001 or register your name & contact information on the calendar located at church lobby.

## ՏՕՆ Ս. ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐԻՉԻ ՈՐԴԻՆԵՐՈՒՆ ԵՒ ԹՈՌՆԵՐՈՒՆ



Շաբաթ Յուլիս 16 տօնն էր Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի որդիներուն եւ թոռներուն: Գրիգոր երկու որդի ունէր, Արիստակէս եւ Վրթանէս:

**Արիստակէս** կրտսեր տղան էր, որ կուսակրօն մնացած էր եւ իր հօրմէն ձեռնադրուած էր քահանայ ու ապա եպիսկոպոս: Եղաւ տեղակալ իր հօր եւ ապա անոր յաջորդեց կաթողիկոսական աթոռի վրայ. Սպաննուեցաւ Արքեղայոս իշխանէն 333 թուին, հաստատ մնալով հաւատքի իր ուսուցման մէջ:

Իրեն յաջորդեց մեծ եղբայրը՝ **Վրթանէս**, որ ամուսնացած էր եւ ունէր երկու զաւակներ. Ան քաջաբար շարունակեց քրիստոնէութեան տարածման ուղղութիւնը ամբողջ Հայաստանի մէջ եւ վախճանեցաւ գրեթէ 80-ամեայ: Վրթանէսի աւագ որդին՝ **Գրիգորիս** ղրկուած էր քարոզելու Հայաստանի շրջակայ երկիրները անցած էր Աղուանք, ապա՝ Վիրք և Մազքթաց աշխարհ:. Սակայն հոն նահատակուեցաւ ու իր մարմինը տեղափոխուեցաւ Արցախ եւ ամփոփուեցաւ եպիսկոպոսանիստ Ամարաս վանքի բակին մէջ:

Իր եղբայրը՝ **Յուսիկ**, ամուսնացած էր Տիրան հայոց թագաւորի աղջկան հետ եւ ինք եւս ունէր երկու որդի, Պապ եւ Աթանագինէս. Յուսիկ ընդիմացաւ թագաւորին,որ կը ցանկար Յուլիանոս Ուրացողի պատկերը դնել եկեղեցիէն ներս: 347 թ. թագաւորի հրամանով նահատակուեցաւ, ու իր մարմինը ամփոփուեցաւ Թորդան:

Այս մեր հայ առաջին սուրբերուն հետ կը յիշուի նաեւ **Դանիէլ Ասորի Եպիսկոպոսը**, որ եղաւ, Տիրան թագաւորի հրամանով, առաջին ոչ հայ կաթողիկոսը հայոց: Դանիէլ, որ սրբակեաց անձ մըն էր եւ խստիւ յանդիմանեց Տիրան թագաւորը Յուսիկ կաթողիկոսի մահուան համար: Ան սպաննուեցաւ իր կաթողիկոսական գահին վրայ բարձրանալէն հազիւ մէկ տարի ետք, 348 թուականին: *(Source: www.shoghagat.org)*

## COMMEMORATION OF ST. GREGORY THE ILLUMINATOR'S SONS & GRANDSONS



On July 16, the Armenian Church commemorated St. Gregory the Illuminator's Sons and Grandsons- Sts. Aristakes, Vrtanes, Housik, Grigoris and Daniel. **Aristakes** was St. Gregory the Illuminator's youngest son. He led a monastic life from a very early age. He was consecrated a bishop by his father. In 325 A.D., he participated in the First Ecumenical Council of Nicaea, representing the first Catholicos and the entire Armenian Church. Upon St. Gregory's death, he became Catholicos of All Armenians. He was killed in 333 A.D. by Arkeghayos, a prince of Greater Armenia, for criticizing the king's incorrigible behavior.

**Vrtanes** was St. Gregory the Illuminator's elder son. He was married and had two sons - Grigoris and Housik. Following the death of his brother, Vrtanes ascended to Catholicos. Vrtanes died in 341 A.D. and was buried in the village Tordan near the relics of St. Gregory the Illuminator.

**Grigoris** was the elder son of Vrtanes. He was sent by the Armenian Church to spread Christianity among its neighboring nations. He was martyred upon the order of King Sanesan, the head of the nomadic Mazkut tribe. His remains were buried by the deacons who served with him in the village Amaras in Artsakh.

**Housik** was the younger son of Vrtanes. He married the daughter of the Armenian King Tiridates and had two sons - Pap and Antiochus. In 341 A.D., he was elected Catholicos of All Armenians. He resisted and challenged the will of King Tiran, who wished to hang the portrait of Julianus the Betrayer in a church. He was severely beaten, martyred and buried in the village Tordan in the province of Daranaghi.

**Bishop Daniel Assyrian** was famous for his saintly way of life. Following the martyrdom of Housik, he was invited to be the Catholicos of All Armenians. During the very first meeting with King Tiran, he strictly castigated him on the murder of the Pontiff Housik. The king summarily ordered the death of Daniel.

*This feast is celebrated on the Saturday preceding the third Sunday of the Feast of Transfiguration of Jesus Christ.*